

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՉԱՓՈՐՈՇՉԻ ՁԵՎԱԶԱՓԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա.Ավագյան, Ա.Ոսկանյան, Մ.Ասլանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ	3
ա/ Հրամանի հերթական համարը և արձակման ամսաթիվը, որով հաստատվել է չափորոշիչը	3
բ/ Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը	3
գ/ Նշում չափորոշիչի պետական գրանցման մասին	3
դ/ Փաստաթղթի անվանումը	3
ե/ Որակավորումը	3
զ/ Որակավորման աստիճանը	4
է/ Մասնագիտությունը	4
ը/ Չափորոշիչը գործողության մեջ դնելու ժամկետը	4
թ/ Չափորոշիչի մշակման տարին և վայրը	4
1. ՈՐԱՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	4
1.1. Դասիչը, որակավորման անվանումը	4
1.2. Որակավորման մակարդակը	4
1.3. Մասնագիտությունը	4
1.4. Մասնագիտացումը	4
1.5. Արժեքը	4
1.6. Ուսումնառության նորմատիվային ժամկետը	5
1.7. Մասնագիտության (մասնագիտացման) կրթության ձևը	5
1.8. Որակավորման բնութագիրը	5
2. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏԱՎԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	6
3. ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	6
4. ՊԱՅՄԱՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ (անցումային տարբերակ)	6
4.1. Պահանջներ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական առարկայախմբերի գծով	6
4.2. Կարողությունների վրա հիմնված որակավորման նորմատիվային պահանջներ	7
4.3. Պահանջներ պրակտիկաների գծով	8
4.4. Պահանջներ մասնագիտության (մասնագիտացման) ամփոփիչ ատեստավորման գծով	8
4. ՊԱՅՄԱՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ (առաջանցիկ տարբերակ)	8
4.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքները	8
4.2. Առանցքային հմտությունները	8

4.3. Կարողությունները.....	9
4.3.1. Մոդուլի անվանումը.....	9
4.3.2. Մոդուլի դասիչը.....	9
4.3.3. Մոդուլի նպատակը.....	9
4.3.4. Մոդուլի մակարդակը.....	9
4.3.5. Մոդուլի տևողությունը.....	9
4.3.6. Մոդուլի կրեդիտային արժեքը.....	10
4.3.7. Մուտքային պահանջները.....	10
4.3.8. Հատուկ պահանջներ.....	10
4.3.9. Ուսումնառության արդյունքները.....	10
4.3.10. Չնահատման կարգը.....	10
4.3.11. Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների.....	10
5. ՊԱՅԱՆՋՆԵՐ ՈՐԱՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ` ԸՍՏ ԱՌԱՐԿԱՅԱԽՄԲԵՐԻ ՈՒ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ` ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ԼՍԱՐԱՆԱՅԻՆ) ԺԱՄԱՔԱՆԱԿՆԵՐՈՎ (անցումային տարբերակ).....	14
6. ՊԱՅԱՆՋՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ.....	16
6.1. Ընդհանուր դրույթներ.....	16
6.2. Ընդունելության գործընթացի կազմակերպման պայմաններ.....	16
6.3. Ուսումնական գործընթացի կազմակերպման պայմաններ.....	16
6.3.1. Կադրային ապահովություն և կադրային համապատասխանություն.....	16
6.3.2. Ուսումնամեթոդական ապահովություն.....	16
6.3.3. Նյութատեխնիկական ապահովություն.....	16
6.3.4. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր նորմատիվներ (ուսումնական պլան).....	17
6.4. Պրակտիկաների կազմակերպման պահանջներ.....	18
6.5. Միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման պահանջներ.....	18
7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	18
8. ՍԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ.....	18

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Չափորոշիչի տիտղոսաթերթը բովանդակում է՝

ա/ Հրամանի հերթական համարը և արձակման ամսաթիվը, որով հաստատվել է չափորոշիչը

Համաձայն ՀՀ կառավարության «Մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին» որոշման՝ չափորոշիչը հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը՝ իր հրամանով: Միաժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաստատված չափորոշիչը պետք է ձևավորված լինի հավելվածի ձևով:

բ/ Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի անվանումը

գ/ Նշում չափորոշիչի պետական գրանցման մասին

Ներառում է պետական գրանցման հերթական համարն ու ամսաթիվը:

դ/ Փաստաթղթի անվանումը

ե/ Որակավորումը

Ելակետային է համարվում որակավորումը, այլ ոչ թե այն մասնագիտությունը, որի շրջանակներում ստացվել է այդ որակավորումը: Այդ իսկ պատճառով «Որակավորումը» տողը նշվում է առաջին հերթին:

Մասնագիտությունների ներկայիս դասակարգչում (ցանկում) ընդգրկված մասնագիտությունների համար նախատեսված որակավորումների անվանումները հաճախ համընկնում են («տեխնիկ», «տեխնոլոգ», «գծագրող-ձևավորող», «մեքենայի» և այլն), և նկատի ունենալով որակավորման գերակայության սկզբունքը՝ դրանք պետք է վերանայվեն այն տեսանկյունից, որ հստակ արտահայտեն մասնագիտության բնույթը: Անընդունելի է օրինակ որակավորման «տեխնիկ» անվանումը, քանի որ ոչ մի կերպ չի արտահայտում, թե ինչ մասնագետի որակավորման մասին է խոսքը: Առավել նպատակահարմար է կիրառել օրինակ «Էլեկտրաքիմիական արտադրության տեխնիկ», «հիդրոտեխնիկական շինարարության տեխնիկ» և այլն:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ կրթության, մասնավորապես՝ մասնագիտական կրթության ոլորտում եվրաինտեգրման գործընթացների տեսանկյունից արդեն իսկ հիմա անհրաժեշտ է չափորոշիչները կառուցել այնպես, որ դրանք «տեղավորվեն» *Որակավորումների եվրոպական շրջանակին* (ՈԵՇ) համադրելի՝ Հայաստանի Որակավորումների ազգային շրջանակի մեջ (ՈԱՇ), որի մշակման գործընթացը պետք է սկսվի ամենամոտ ապագայում: ՈԵՇ-ը ենթադրում է «մինչբուհական» կրթությանը համապատասխանող որակավորումների 4-5 մակարդակ, որոնց համառոտ նկարագրությունը տրված է հավելվածում: Չափորոշիչի առաջարկված ձևաչափը միտված է ապագային (նպատակահարմար չէ շարունակել կիրառել միայն արդի իրականությանը համապատասխանող ձևաչափ), սակայն կարող է կիրառվել նաև ներկայումս:

Որակավորումների նոր համակարգին անցնելու դեպքում «տեխնիկ» անվանումը (եզրույթը) կարող է օգտագործվել, օրինակ, մի շարք տեխնիկական մասնագիտությունների *որակավորման մակարդակի* հավաքական անվանման համար:

զ/ Որակավորման աստիճանը

Նշվում է որակավորման աստիճանի «արհեստավոր» կամ «մասնագետ» անվանումը՝ համապատասխանաբար նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության համար:

ՈԱՇ-ը ներդնելուց հետո տվյալ տողը կփոխարինվի «Որակավորման մակարդակը» տողով, ուր կնշվի որակավորման համապատասխան մակարդակը՝ «1-ին», «2-րդ», «3-րդ» և այլն:

ե/ Մասնագիտությունը

Այս տողը նախատեսված է որպես միջանկյալ տարբերակ՝ մինչև ՈԱՇ-ի ներդրումը, որի շրջանակներում որակավորման անվանումը լիովին կարտահայտի մասնագիտության բնույթը, և այս տողի անհրաժեշտությունը կվերանա:

ը/ Չափորոշիչը գործողության մեջ դնելու ժամկետը

թ/ Չափորոշչի մշակման տարին և վայրը

Փաստաթղթի երկրորդ էջում բերվում է դրա բովանդակությունը:

1. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. Դասիչը, որակավորման անվանումը

Լրացվում է սույն ցուցումների «Տիտղոսաթերթ» բաժնի «ա» կետի պահանջների համաձայն: Ենթադրվում է, որ ՈԱՇ-ը կսահմանի մասնագիտությունների դասիչներ, որոնք կարող են տարբերվել ներկայումս գործող, մասնագիտությունների ցանկում կիրառվող դասիչներից: Մինչև ՈԱՇ-ի ներդրումը նպատակահարմար է կիրառել մասնագիտությունների ցանկի դասիչները:

1.2. Որակավորման մակարդակը

Լրացվում է սույն ցուցումների «Տիտղոսաթերթ» բաժնի «բ» կետի պահանջների համաձայն:

1.3. Մասնագիտությունը

Տես՝ սույն ցուցումների «Տիտղոսաթերթ» բաժնի «գ» կետը: Դասիչը համապատասխանում է մասնագիտությունների ցանկի դասիչին:

1.4. Մասնագիտացումը

Նշվում է մասնագիտացման դասիչը (եթե կա) և անվանումը: Կիրառվում է նույն սկզբունքը, ինչ որ «Մասնագիտությունը» տողի համար:

1.5. Արժեքը

Նշվում է տվյալ որակավորումը ստանալու համար սահմանված, յուրացման համար անհրաժեշտ մոդուլների կրեդիտների գումարային արժեքը: Մինչև համապատասխան որոշում ընդունելը պայմանականորեն կարելի է համարել, որ 36 ակադեմիական ժամը (կոնտակտային և ինքնուրույն) հավասար է մեկ կրեդիտի:

1.6. Ուսումնառության նորմատիվային ժամկետը

Թեև տվյալ որակավորումը ստանալու համար որոշիչ նշանակություն ունի ստացած կրեդիտների քանակը, այսինքն՝ համապատասխան մոդուլներով սահմանված կարողությունների դրսևորումը (որակավորում ստանալու հավակնորդի կողմից սահմանված կարողությունների դրսևորումը պետք է հանգեցնի համապատասխան կրեդիտի ձեռքբերման՝ անկախ ուսումնառության ձևից կամ դրա փաստից, անկախ ուսումնառության տևողությունից), սակայն այս կետում նպատակահարմար է նշել չափորոշիչ բոլոր մոդուլներին համապատասխանող ժամաքանակի գումարային արժեքը (արտահայտված նաև տարիների թվով, օրինակ՝ 1200 ժամը պայմանականորեն հավասար է մեկ ուսումնական տարվա բեռնվածության ծավալին), որը կողմնորոշիչ բնույթ է կրում:

1.7. Մասնագիտության (մասնագիտացման) կրթության ձևը

Նշվում են տվյալ մասնագիտությամբ կրթության թույլատրված ձևերը՝ առկա (ցերեկային), հեռակա, դրսեկությամբ, հեռավար և այլն:

1.8. Որակավորման բնութագիրը

1.8.1. Ջբաղմունքը

Նշվում են զբաղմունքները, որոնք կարող է իրականացնել մասնագետը՝ ըստ ՀՀ Ջբաղմունքների դասակարգչի:

1.8.2. Մասնագիտական գործունեության բնագավառը

Նշվում են մասնագետի մասնագիտական գործունեության բնագավառները՝ ըստ ՀՀ Ջբաղմունքների դասակարգչի համապատասխան զբաղմունքի պարզաբանումների և ըստ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի:

1.8.3. Մասնագիտական գործունեության օբյեկտները

Նշվում են մասնագետի մասնագիտական գործունեության օբյեկտները՝ ըստ ՀՀ Ջբաղմունքների դասակարգչի համապատասխան զբաղմունքի պարզաբանումների:

1.8.4. Մասնագիտական գործունեության տեսակները

Նշվում են մասնագետի մասնագիտական գործունեության տեսակների օբյեկտները՝ ըստ ՀՀ Ջբաղմունքների դասակարգչի համապատասխան զբաղմունքի պարզաբանումների:

1.8.5. Մասնագիտական գործունեության պարտականությունները

(տրվում են համապատասխան որակավորմամբ մասնագետի մասնագիտական գործունեության պարտականությունները)

Ա.
Բ.
Գ.
Դ.
...

Անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել նաև Մասնագիտական գործունեության խնդիրները՝ ըստ մասնագիտական գործունեության պարտականությունների՝ հետևյալ տեսքով՝

U1

U2

...

F1

F2

...

1.8.6. Որակավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները

Որակավորմանը ներկայացվող ընդհանուր պահանջները բերված են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համար՝ ըստ ՈԵՇ-ի որակավորումների համապատասխան մակարդակներին ներկայացվող պահանջների:

1.8.7. Շրջանավարտի որակավորման բնութագիրը

Նախատեսված է միայն անցումային տարբերակի համար:

Նշվում են շրջանավարտի կրթվածության ու զարգացվածության նկատմամբ պետական պահանջները ինչպես հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, բնագիտական և այլ գիտելիքների, այնպես էլ շրջանավարտի մասնագիտական պատրաստվածության, ունակությունների, հմտությունների, կարողությունների վերաբերյալ, և դրանք աշխատանքային գործընթացում կիրառելու հնարավորությունները՝ հաշվի առնելով այդ բնագավառում միջազգային չափանիշները:

2. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նշվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտի հետագա կրթություն ստանալու իրավունքները:

3. ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

Համապատասխան տողերում լրացվում է միայն որակավորման անվանումը:

4. ՊԱՅԱՆՋՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ (անցումային տարբերակ)

4.1. Պահանջներ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական առարկայախմբերի գծով

Նշվում են պահանջները ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական, ընդհանուր մասնագիտական, հատուկ մասնագիտական առարկայախմբերի գծով:

4.2. Կարողությունների վրա հիմնված որակավորման նորմատիվային պահանջներ

Նկատի ունենալով, որ չափորոշիչի անցումային տարբերակում նույնպես առանձնահատուկ տեղ է հատկացված շրջանավարտների գործնական կարողություններին ու հմտություններին, ինչպես նաև աշխատանքային շուկայի պահանջներին մասնագետի մտահասու լինելու գործոնին, ստորև, որպես կոնկրետ օրինակ, ներկայացնում ենք «Ֆինանսաբանկային քուլեջ» հիմնադրամի կողմից մշակված «Բանկային աշխատողների ունակությունները և հմտությունները» կրթական չափորոշիչը՝ առևտրային բանկերի ֆունկցիոնալ ստորաբաժանումների աշխատակիցների համար: Այն արտացոլում է գործատուների (բանկերի) պահանջները և հանդիսանում ուսումնական գործընթացի կազմակերպման ու որակավորման բարձրացման դասընթացների անցկացման հիմնական բազան:

Ստորև բերվում է հաճախորդներին անմիջականորեն սպասարկողներին ներկայացվող ունակությունները և հմտությունները վերաբերյալ չափորոշիչների մի քանի օրինակներ (մշակված 118 պահանջներից քաղվածք), ինչպես նաև դրանց բովանդակային խնդիրներն ու կարողությունները «Բանկային գործ» մասնագիտության համար:

«Բանկային աշխատողների ունակությունները և հմտությունները» չափորոշիչ

...
	«Բանկային գործ» մասնագիտության ունակությունները և հմտությունները	Բովանդակությունը. կարողանալ՝
58.	Ներկայացնել և բնութագրել վարկային հարաբերությունների սուբյեկտները	<ul style="list-style-type: none"> ▪ թվարկել վարկային հարաբերությունների սուբյեկտները, ▪ բնորոշել փոխառուին, ▪ բնորոշել փոխատուին
59.	Ներկայացնել և բնութագրել վարկավորման փուլերը	<ul style="list-style-type: none"> ▪ ներկայացնել վարկավորման փուլերը, ▪ թվարկել վարկունակության 4 հիմնական ասպեկտները
60.	Տալ հաճախորդի վարկունակության հասկացության սահմանումը, թվարկել և բացատրել վարկունակության չափանիշները	<ul style="list-style-type: none"> ▪ Տալ հաճախորդի վարկունակության և վճարունակության սահմանումները, ▪ թվարկել և բացատրել հաճախորդի վարկունակության չափանիշները, ▪ թվարկել հաճախորդի վարկունակության վերլուծության մեթոդները
61.	Ներկայացնել և բնութագրել հաճախորդի վարկունակության գնահատման ամերիկյան վեց «C»-երի մեթոդը և վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման համար ՀՀ ԿԲ-ի կողմից բանկերին առաջարկվող չափանիշները	<ul style="list-style-type: none"> ▪ թվարկել և բնութագրել հաճախորդի վարկունակության գնահատման վեց «C»-երի մեթոդի չափանիշները՝ <ul style="list-style-type: none"> - վարկառուի վարկունակությունը (character), - հաճախորդի վարկունակությունը (capacity), - դրամական միջոցներ (cash), - ապահովվածություն (collateral), - պայմաններ (conditions), - վերահսկողություն (control), ▪ բնութագրել ՀՀ ԿԲ-ի կողմից բանկերին առաջարկվող, վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները
62.	Որոշել հաճախորդի վարկունակության դասը՝ ֆինանսական գործակիցների հիման վրա	<ul style="list-style-type: none"> ▪ թվարկել հաճախորդի ֆինանսական կայունության գնահատման ֆինանսական գործակիցները, ▪ ներկայացնել ֆինանսական գործակիցների որոշման բանաձևերը, ▪ ներկայացնել ֆինանսական գործակիցների նորմատիվային

		<p>սահմանումները,</p> <ul style="list-style-type: none"> ▪ ներկայացնել վարկունակության գնահատականը վարկատուի ռեյթինգի վարկանիշի միջոցով, ▪ ներկայացնել մանր և միջին ձեռնարկությունների վարկունակության գնահատման յուրահատկությունները
63.	Ներկայացնել գործարար ռիսկի վերլուծությունը՝ որպես վարկունակության գնահատման միջոց:	<ul style="list-style-type: none"> ▪ տալ գործարար ռիսկի սահմանումը, ▪ խմբավորել գործարար ռիսկի գործոններն՝ ըստ շրջապատույտի փուլերի:
...

4.3. Պահանջներ պրակտիկաների գծով

Նշվում են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող հիմնական պրակտիկաների տեսակները:

4.4. Պահանջներ մասնագիտության (մասնագիտացման) ամփոփիչ ատեստավորման գծով

Մասնագիտության (մասնագիտացման) բնույթից և շնորհվող որակավորումից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սահմանվում են պետական ամփոփիչ ատեստավորման հետևյալ ձևերը՝

- պետական քննություն մասնագիտական առանձին առարկաներից,
- պետական քննություն մասնագիտական մի քանի առարկաներից (միջառարկայական քննություն),
- դիպլոմային նախագիծ,
- դիպլոմային աշխատանք:

4. ՊԱՐԱՆՁՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ (առաջանցիկ տարբերակ)

4.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքները:

Տվյալ որակավորման չափորոշչում նշվում են Ձևաչափում բերված պահանջները, ինչպես նաև ՀՀ համապատասխան իրավական ակտերով սահմանված, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությամբ մասնագետին ներկայացվող պահանջները ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում:

4.2. Առանցքային հմտությունները

4.2.1 - 4.2.8 կետերում բերվում է առանցքային հմտությունների ցանկը, որոնք պարտադիր են ինչպես նախնական մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթությամբ (որակավորման համապատասխան աստիճան ունեցող) մասնագետի համար: Ըստ որակավորման աստիճանի՝ առանցքային հմտությունների նկատմամբ ներկայացվող պահանջները տարբերվում են իրենց մակարդակով (տես՝ Ձևաչափի 1.8.6 կետը):

4.3. Կարողությունները

Կարողությունների նկատմամբ պահանջները բերվում են մոդուլների (ուսումնառության արդյունքների) տեսքով:

4.3.1. Մոդուլի անվանումը

Նշվում է մոդուլի լրիվ անվանումը, որը պետք է լիարժեքորեն արտահայտի մոդուլի բովանդակությունը: Մոդուլի անվանումը նույնությամբ արտացոլվում է շրջանավարտին (ուսանողին) տրվող կրթության մասին փաստաթղթում (որակավորման վկայականում):

4.3.2. Մոդուլի դասիչը

Յուրաքանչյուր մոդուլի շնորհվում է դասիչ, որը պետք է արտացոլի մոդուլի տեսակը, դրա մակարդակը, վերջին անգամ դրա վերանայման ամսաթիվը, ինչպես նաև պետք է պարունակի մոդուլի հերթական համարը:

Օրինակ՝

- *Թեթև արդյունաբերություն «Դ2-94-050» դասիչը* պատկանում է դիզայնի 2-րդ մակարդակի մոդուլին և մշակվել (վերջին անգամ վերանայվել) է 1994 թվականին: «050» թիվը մոդուլի հերթական համարն է:

4.3.3. Մոդուլի նպատակը

Նշվում է, թե ինչով է պայմանավորված տվյալ մոդուլի անհրաժեշտությունը, և ինչ նպատակով է այն ներդրված, որն է դրա տեղն ու դերը կրթական ծրագրի շրջանակներում: Պարզաբանումներ են տրվում, թե ինչպես տվյալ մոդուլը կարող է նպաստել ուսանողի կրթական առաջխաղացմանը կամ նրա հաջողություններին ապագա աշխատանքային գործունեության մեջ: Կարող է ներկայացվել նաև վերապատրաստման տարատեսակ դասընթացներում տվյալ մոդուլի կիրառման հնարավորությունները:

Ներկայացվում է մոդուլի կիրառությունները և լավագույն օգտագործման ձևերը: Հատկորոշվում է թիրախային խումբը: Հստակ ներկայացվում են այն կարողությունները, որոնք ուսանողները ձեռք կբերեն տվյալ մոդուլը հաջողությամբ ավարտելու դեպքում:

Կարող են նշվել այն ենթաորակավորումները, որոնց ձեռքբերման համար անհրաժեշտ է մոդուլի ուսումնասիրումը:

4.3.4. Մոդուլի մակարդակը

Յուրաքանչյուր մոդուլի համար սահմանվում է դրա մակարդակը, որը համապատասխանում է շնորհվող որակավորման մակարդակին: Մինչև Որակավորումների ազգային շրջանակին անցնելը մոդուլի մակարդակը կհամապատասխանի որակավորման աստիճանին (արհեստավոր կամ մասնագետ), այն է՝ 1-ին և 2-րդ:

4.3.5. Մոդուլի տևողությունը

Նշվում է մոդուլի նորմատիվային տևողությունը, որն արտահայտվում է դասաժամերով (45 րոպե)՝ բացառությամբ գործնական պարապմունքների, որոնց տևողությունը 60 րոպե է: Մոդուլի ուսումնասիրության իրական տևողությունը որոշվում է ուսանողի և դասավանդողի համաձայնությամբ: Այն պետք է որոշվի՝ ելնելով ուսանողի պահանջներից: Դասախոսը պատասխանատու է մոդուլի կառուցվածքի, դասավանդման և տևողության համար: Սովորաբար մոդուլի տևողությունը 36 կամ 40

ժամ է, սակայն որոշ մոդուլներ կարող են կազմվել որպես «կես մոդուլ» (օրինակ՝ 16-18 ժամ) կամ «կրկնակի մոդուլ» (72 ժամ):

4.3.6. Մոդուլի կրեդիտային արժեքը

Մոդուլի կրեդիտային արժեքն ընդհանուր առմամբ պետք է կազմի 1 միավոր: Գիտելիքների և հմտությունների լայնությունն ու խորությունը գնահատելու համար՝ որոշ մոդուլների արժեքավորման եղանակը կարող է լինել այլ: «Կես մոդուլի» կամ «կրկնակի» մոդուլի կրեդիտային արժեքները կարող են համապատասխանաբար լինել ½ կամ 2 միավոր:

4.3.7. Մուտքային պահանջները

Նշվում են այն պահանջները, որոնք ներկայացվում են ուսանողի մուտքային պատրաստվածության նկատմամբ: Տվյալ մոդուլն անցնելու համար՝ հնարավոր է, որ պահանջվի մեկ այլ մոդուլի կամ մոդուլների ավարտումը (ներառյալ որոշակի գործնական հմտություններ):

4.3.8. Հատուկ պահանջներ

Որոշ դեպքերում մոդուլների ուսումնասիրման նկատմամբ կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ, օրինակ՝ տվյալ մոդուլը պետք է համատեղվի մեկ այլ մոդուլի կամ մոդուլների հետ:

4.3.9. Ուսումնառության արդյունքները

Ուսումնառության արդյունքները հստակ ձևակերպում են գիտելիքները, հմտությունները և վարքագծի տարրերը (կարողությունները), որոնք ուսանողը կցուցաբերի ուսման արդյունքում: Ուսումնառության արդյունքի ձևակերպումը պետք է համապատասխանի «կարողանալ անել ...» լեզվական կառույցին:

4.3.10. Գնահատման կարգը

Նշվում է, թե ինչ եղանակով և ինչ սկզբունքների համաձայն է իրականացվում գնահատումը:

4.3.11. Կատարման (կատարողականության) չափանիշները, գնահատման միջոցները, մեթոդաբանությունը և ռեսուրսները, երաշխավորված ժամաքանակը՝ ըստ մոդուլի ուսումնառության արդյունքների

Հատուկ ուշադրություն է պահանջում կատարողականության չափանիշների ճշգրիտ ձևակերպումը, քանի որ դրանց համեմատությամբ է գնահատվում ուսանողի կարողունակությունը՝ տվյալ ուսումնառության արդյունքին համապատասխան: Կատարողականության չափանիշները ուսանողի՝ պահանջվող կարողության ձեռքբերման ապացույցն է:

Ստորև, որպես օրինակ, բերված է «2809 – Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության «Մեքենայով հագուստի կարման հմտություններ: Կիսաշրջագեստներ» մոդուլը:

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

«ՄԵՔԵՆԱՅՈՎ ՀԱԳՈՒՄՏԻ ԿԱՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿԻՍԱՇՐՁԱԶԳԵՍՆԵՐ»

ՀՊՏ – 16

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ

Դասախոսություն՝	7 ժամ
Լաբորատոր աշխատանքներ՝	11 ժամ
Գործնական պարապմունք ուսումնական արհեստանոցում՝	12 ժամ

ՆՊԱՏԱԿԸ

Այս մոդուլը մշակվել է արտադրության մեջ կիրառվող մեքենասարքավորումներն օգտագործելու միջոցով կիսաշրջագծեստների կարելու վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ և հմտություններ տալու համար: Մոդուլը նախատեսված է ոչ միայն կարի արտադրության մեջ կիսաշրջագծեստներ կարող մասնագետների, այլև կարի արտադրության բրիգադի կամ հոսքային գծի աշխատողների աշխատանքը կազմակերպող մասնագետների համար:

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Այս մոդուլը ուսումնասիրելու համար՝ ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի «Հագուստի մասնիկների միացման պրոցեսի բովանդակությունը, օգտագործվող հիմնական հասկացությունները: Մասնիկների միացման եղանակները», «Կարի ունիվերսալ, մասնագիտացված մեքենաների ավտոմատների և կիսավտոմատների օգտագործման հմտություններ» մոդուլները:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլը յուրացնելուց հետո՝ ուսանողը պետք է՝

1. հիմնա կիսաշրջագծեստների կարման գործընթացի տեխնոլոգիական հաջորդականությունը և կանոնները,
2. կատարի կիսաշրջագծեստների հանգույցների մշակում,
3. կատարի արտադրանքի հիմնական հանգույցների միացում, ձևավորի կոճկման տեղամասը,
4. կատարի արտադրանքի վերջնական ԽՁՄ (խոնավաջերմային մշակում), հարդարում և որակի ստուգում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1

Իմանալ կիսաշրջագծեստների կարման գործընթացի տեխնոլոգիական հաջորդականությունը և կանոնները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. Գիտի տրված մոդելի կարման ճիշտ տեխնոլոգիական հաջորդականությունը:
- բ. Գիտի տրված մոդելի կարման յուրահատկությունները և պարտադիր կանոնները՝ ըստ տեղամասերի և դետալների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի կոնկրետ արտադրատեսակի նմուշ կամ էսքիզ (նշելով օգտագործվող գործվածքի տեսակը)՝ առաջարկելով շարադրել դրա կարման տեխնոլոգիական հաջորդականությունը: Միաժամանակ, նա պետք է ներկայացնի յուրաքանչյուր դետալի կարման ընթացքում պահպանվող կանոնները, որոնք երաշխավորելու են արտադրանքի անհրաժեշտ որակը:

Ստորև բերվում է հիմնական կանոնների բովանդակությունը.

- կարի տեսակը՝ ըստ տեղամասերի
- կարաբաժնի չափը՝ ըստ տեղամասերի
- կարի դիրքը՝ ըստ տեղամասերի
- կարի շիտակ և թարս կողմերը
- սեղմոնների դիրքը և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը անսխալ շարադրում է մոդելի

կարման տեխնոլոգիական հաջորդականությունը և մոդելին համապատասխան մշակման կանոնները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսության միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին գիտելիքներ տալ այս խմբի արտադրանքի կարման գործընթացի հաջորդականության և ըստ տեղամասերի կարման կանոնների վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնական գրականություն, ամսագրեր, ստանդարտներ, կարի տեսակների ցուցադրական օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2

Կատարի կիսաշրջագծեստի հանգույցների մշակում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կատարում փոքր (հարդարող) մասնիկների և գրպանի մշակումը:
- բ. ճիշտ է կատարում առաջամասի և հետևամասի մշակումը:
- գ. ճիշտ է կատարում գոտու մշակումը:
- դ. ճիշտ է ընտրում և կիրառում մեքենասարքավորումները և մանր մեքենայացման միջոցները:
- ե. ճիշտ է իրականացնում կատարվող օպերացիայի արդյունքի ստուգումը:
- զ. Գիտի և պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կառաջադրվի մշակել հանգույցների խումբ, որում ներառված կլինեն գրպան, գոտի, առաջամաս և հետևամաս, հարդարող մասնիկ: Առաջադրված խմբի մշակումը կատարելուց հետո՝ նա պետք է բացատրի նաև տվյալ հանգույցի այլ տարատեսակների մշակման կարգը:

Արդյունքը կհամարվի բավարար ձեռքբերված, եթե ուսանողը հանգույցների առաջարկված տեսակները կարողանա ճիշտ մշակել, ընտրել անհրաժեշտ մեքենասարքավորումները և մանր մեքենայացման միջոցները, դրանք ճիշտ օգտագործել, կատարվող օպերացիաների արդյունքները ստուգել և յուրաքանչյուր օպերացիան կատարելիս պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները:

Այլ հանգույցների մշակման գործընթացը բացատրելիս պետք է ճիշտ ներկայացնի մշակման առանձնահատուկ պահերը և ընթացքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցանումը կատարվելու է դասախոսությունների, լաբորատոր և գործնական պարապմունքների ձևով: Յուրաքանչյուր ուսանող պետք է սովորի և կատարի արտադրատեսակների հանգույցների մշակման բոլոր օպերացիաները: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ կլինի օգտագործել հանգույցների մասնիկների ձևվածքներ, լեկալներ, համապատասխան մեքենասարքավորումներ, ուսումնական գրականություն, տեխնիկական փաստաթղթեր և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝ 2 ժամ
Լաբորատոր աշխատանք՝ 6 ժամ

Դասախոսությունների ընթացքում ուսանողներին գիտելիքներ են հաղորդվելու կիսաշրջագծեստների բոլոր հանգույցների մշակման կարգի և առանձնահատկությունների մասին: Լաբորատոր աշխատանքների ընթացքում ուսանողները սովորելու են կատարել յուրաքանչյուր հանգույցի մշակման քայլերն ու օպերացիաները:

ԱՐԴՅՈՒՆՔ 3

Կատարել արտադրանքի հիմնական հանգույցների միացում: Ձևավորել կոճկման տեղամասը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կատարում առաջամասի և հետևամասի մշակումը:
- բ. ճիշտ է կատարում աստառի մշակումը:
- գ. ճիշտ է միացնում հետևամասն առաջամասին:
- դ. ճիշտ է միացնում գոտին գոտկատեղին:
- ե. Ըստ մոդելի՝ ճիշտ է մշակում կոճկման տեղամասը և փեշը:

- զ. ճիշտ է տեղադրում հարդարող մասնիկները բոլոր տեղամասերում:
- է. ճիշտ է միացնում աստառը արտադրանքին:
- ը. ճիշտ է ընտրում և կիրառում օպերացիաների կատարման համար մեքենասարքավորումները և մանր մեքենայացման միջոցները:
- թ. ճիշտ է ստուգում կատարվող օպերացիաների արդյունքները:
- ժ. Գիտի և պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն որոշակի տեսակի կիսաշրջագծեստների նախապատրաստված հիմնական հանգույցները: Նա պետք է այդ հանգույցները միացնելով կարի արտադրանքը՝ պահպանելով մոդելի առանձնահատկությունները: Կարելու ընթացքում պետք է ճիշտ պահպանվի հանգույցների միացման հաջորդականությունը, կատարման մատչելիությունը, մեքենասարքավորումների և մանր մեքենայացման միջոցների ճիշտ ընտրությունը, օգտագործումը: Միաժամանակ նա պետք է կատարի որակի միջանկյալ ստուգման գործողություններ, ըստ անհրաժեշտության բացատրի տրվող գնահատականը: Պետք է ուշադրություն դարձնի նաև աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման հանգամանքին:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը առաջադրված արտադրանքի հիմնական հանգույցների միացումը անսխալ կատարի՝ պահպանելով բոլոր կանոնները: Թույլատրելի են շեղումներ՝ գործող ստանդարտների սահմաններում:

Ստորև բերվում են որոշակի շեղումների թույլատրելի չափերը.

- գրպանների սիմետրիկության խախտում՝ մինչև 5մմ
- ռելիեֆային կարերի խախտում՝ մինչև 5մմ և այլն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը խորհուրդ է տրվում կատարել դասախոսության, գործնական աշխատանքների և պրակտիկ ուսուցման ձևով: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ է ունենալ մեքենասարքավորումներ, գործիքներ և մանր մեքենայացման միջոցներ, արտադրանքի պատրաստի հանգույցներ, օժանդակ նյութեր, տեխնիկական փաստաթղթեր, ստանդարտներ, պլակատներ, պրոյեկցիոն սարք, թափանցաթերթիկներ, ուսումնական տեսաֆիլմ՝ ցուցադրման սարքերով:

Յուրաքանչյուր ուսանող պետք է գործնական պարապմունքների ընթացքում կատարի բոլոր օպերացիաները՝ տարբեր ձևերի և մոդելի արտադրատեսակների համար, պրակտիկայի ընթացքում ձեռք բերի բավարար նորմատիվային հմտություններ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Դասախոսություն՝	2 ժամ
Լաբորատոր աշխատանք՝	2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4

Կատարել արտադրանքի վերջնական ԽՁՄ, հարդարում և որակի ստուգում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է պահպանում ըստ մոդելի ընտրված ԽՁՄ ռեժիմը:
- բ. ճիշտ է կատարում ԽՁՄ օպերացիաները:
- գ. ճիշտ է կատարում պատրաստի արտադրանքի վերջնական հարդարումը:
- դ. ճիշտ է կատարում պատրաստի արտադրանքի որակի ստուգումը:
- ե. Ըստ մոդելի՝ ԽՁՄ սարքավորումները ճիշտ է ընտրում և կիրառում:
- զ. Գիտի և պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի պատրաստի արտադրանքի որևէ տեսակ՝ իր համապատասխան փաստաթղթով, և հարդարող նյութեր: Նա պետք է ըստ կոնֆեկցիոն քարտի կատարի վերջնական հարդարումը, վերջնական խոնավաջերմային մշակումը, մաքրի արտադրանքը արտադրական թափոններից, ստուգի որակը և ներկայացնի արդյունքները: Այլ տարբերակների վերաբերյալ ուսանողի իմացությունը կստուգվի կոնկրետ հարցադրումներով:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե արտադրանքն ապրանքային տեսքի բերելու վերը թվարկված բոլոր օպերացիաները կատարվեն իրենց համապատասխան ռեժիմի սահմաններում, և հարցադրումներին տրվեն ճիշտ պատասխաններ: Շեղումները կարող են թույլատրվել միայն ստանդարտներով նախատեսված սահմաններում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դասախոսության միջոցով ուսանողին ուսուցանվելու է հիմնական տեսական նյութը:

Գործնական պարապմունքների ընթացքում ուսանողը կկատարի բոլոր օպերացիաները պահանջվող հմտությամբ և արագությամբ: Այս արդյունքին հասնելու համար՝ անհրաժեշտ կլինի ունենալ հետևյալ ռեսուրսները՝ պատրաստի արտադրատեսակներ, հարդարող նյութեր, մեքենասարքավորումներ, գործիքներ, թելեր, մանեկեններ, տեխնիկական փաստաթղթեր, ուսուցողական նյութեր և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ	
Դասախոսություն՝	1 ժամ
Լաբորատոր աշխատանք՝	3 ժամ

5. ՊԱՋԱՆՋՆԵՐ ՈՐԱԿՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՅԱԽՄԲԵՐԻ ՈՒ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ՝ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ (ԸՆԴՅԱՆՈՒՐ) ԵՎ ԱՆՋՐԱԺԵՇՏ (ԼՍԱՐԱՆԱՅԻՆ) ԺԱՄԱՔԱՆԱԿՆԵՐՈՎ (անցումային տարբերակ)

Ստորև բերված են ըստ դասավանդվող առարկաների (առարկայախմբերի) կադրերի պատրաստման մակարդակին ներկայացվող պահանջների և մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի վերաբերյալ երկուական օրինակ՝ «0411-Բուժական մերսում» մասնագիտության ընդհանուր հունամիտար և սոցիալ-տնտեսագիտական և հատուկ մասնագիտական առարկայախմբերից:

Այսպես՝ «Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ» առարկայի բնագավառում շրջանավարտը պետք է.

- պատկերացում ունենա հասարակության և անհատի զարգացման գործառույթների օրինաչափությունների հասկացության սոցիոլոգիական մոտեցումների մասին,
- պատկերացում ունենա հասարակության սոցիալական կառուցվածքի, սոցիալական շերտավորման, սոցիալական փոխհարաբերությունների և հիմնական սոցիալական ինստիտուտների մասին,
- պատկերացում ունենա սոցիալական շարժումների, սոցիալական փոփոխությունների և զարգացման այլ ազդակների մասին,
- իմանա իշխանության քաղաքական սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին (Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում),
- իմանա քաղաքական համակարգի, քաղաքական գիտակցության և քաղաքական կուլտուրայի մասին,
- իմանա միջազգային հարաբերությունների մասին,
- իմանա սոցիալ-տնտեսական գործընթացը Հայաստանի Հանրապետությունում:

«Մերսում, մեթոդները և տեխնիկա» առարկայի բնագավառում շրջանավարտը պետք է.

- իմանա մերսման զարգացման պատմությունը,
- իմանա մերսման մեթոդները և տեսակները,
- իմանա մերսման կիրառման կլինիկա-ֆիզիոլոգիական հիմնավորումը,
- իմանա մերսման ազդեցությունը տարբեր օրգան-համակարգերի վրա,
- իմանա մերսում կատարելու հիմնական ձևերը,
- իմանա մերսման ցուցումները և հակացուցումները,
- իմանա մերսողի պարտականությունները,
- կարողանա ճիշտ դիրք ընտրել մերսման համար և խնայողաբար օգտագործել իր ուժերը,

- կարողանա մերսում կատարել բոլոր ձևերով,
- կարողանա լրացնել հատուկ մատյան և թերթիկ,
- կարողանա պահպանել հիգիենայի բոլոր կանոնները և մերսման կաբինետներին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները:

Պահանջներ «0411 - Բուժական մերսում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույն ծավալի նկատմամբ

Դասընթացների անվանումը և հիմնական բաժինները

«Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ»` 36 ժամ

Քաղաքագիտության առարկան, քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ, քաղաքական համակարգ, քաղաքականության սուբյեկտներ, քաղաքական գիտակցություն, քաղաքական կուլտուրա, միջազգային հարաբերություններ: Սոցիալ-քաղաքական գործընթացը Հայաստանի Հանրապետությունում:

Սոցիոլոգիան` որպես գիտություն:

Հասարակությունը` որպես սոցիալ-կուլտուրական համակարգ, սոցիալական և տնտեսական հարաբերություններ: Սոցիալական գործընթացներ, ինստիտուտներ և կազմակերպություններ: Անձի (անհատի) սոցիալական դերը և վարքը: Սոցիալական շարժումներ: Սոցիալական հակամարտություններ և դրանց լուծման միջոցները:

«Մերսում, մեթոդները և տեխնիկա»` 112 ժամ

Մերսման պատմության զարգացումը, մեթոդները, տեսակները: Մերսման կլինիկա-ֆիզիոլոգիական հիմնավորումը և ազդեցությունը տարբեր օրգան-համակարգերի վրա: Մերսման ցուցումները և հակացուցումները: Մերսողի պարտականությունները և աշխատանքային ռեժիմը մերսման տարբեր ձևերի իրականացման ժամանակ: Մերսման կաբինետին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները, հիգիենայի կանոնների պահպանումը մերսման ժամանակ:

Մերսման կաբինետում հաշվառահաշվետվական փաստաթղթերի լրացման կարգը:

Յուրաքանչյուր մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույն ծավալի նկատմամբ դասընթացային պահանջները երաշխավորվում է լրացնել ներքոնշյալ տեսքով:

NN	Մշխուր	Դասընթացների անվանումը և դրանց հիմնական բաժինները (մոդուլները)	Ուսումնական բեռնվածությունը առարկայի համար	Այդ թվում	
				Պարտադիր ուսումնական պարտանյութեր	Ուսանողի վերաբերյալ հնթնությունը աշխատանքի վաճառ
	II	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկայախումբ	565	377	188
	01	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	108	72	36
	02				
				
	III	Մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական			

ՄՐԳԱ	առարկայախումբ			
01				
02				
...				

6. “ՅՆՏՆՈՒՄ ԵՎ ԿՐԹՈՒՄ ԿՐԹԱԿՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

6.1. Ընդհանուր դրույթներ

Նշվում են ընդհանուր պահանջները ուսումնական գործընթացի կազմակերպման և բովանդակային ապահովվածության նկատմամբ:

6.2. Ընդունելության գործընթացի կազմակերպման պայմաններ

6.2.1. Լրացվում է որակավորման անվանումը և կրթության հիմքը՝ հիմնական ընդհանուր և (կամ) միջնակարգ (լրիվ) ընդհանուր:

6.2.2. Լրացվում է որակավորման անվանումը:

6.3. Ուսումնական գործընթացի կազմակերպման պայմաններ

6.3.1. Կադրային ապահովություն և կադրային համապատասխանություն

Նշվում են ընդհանուր պահանջները նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների անձնակազմի և դրա անդամների մասնագիտական որակավորման նկատմամբ:

6.3.2. Ուսումնամեթոդական ապահովություն

Նշվում են ընդհանուր պահանջները նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ուսումնամեթոդական ապահովվածության նկատմամբ:

6.3.3. Նյութատեխնիկական ապահովություն

Նշվում են ընդհանուր պահանջները նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների նյութատեխնիկական ուսումնամեթոդական ապահովվածության նկատմամբ, բերվում են կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, ուսումնական, ուսումնաօժանդակ և օժանդակ ստորաբաժանումների, նյութերի ու պարագաների երաշխավորված ցանկեր:

Ստորև, որպես օրինակ՝ ներկայացված է միջին մասնագիտական կրթության «2809 - Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտության իրականացման համար անհրաժեշտ կաբինետների, ուսումնական լաբորատորիաների և արհեստանոցների երաշխավորված ցանկը՝

Կաբինետներ.

- սոփիալ-տնտեսագիտական առարկաների,
- հայոց լեզվի և խոսքի մշակույթի,
- օտար լեզուների,
- ճարտարագիտական գրաֆիկայի,
- տեխնիկական մեխանիկայի,

- չափագիտության, ստանդարտավորման ու սերտիֆիկացման,
- տնտեսագիտության և մենեջմենթի,
- նյութագիտության,
- հատուկ նկարչության ու կոմպոզիցիայի,
- կարի արտադրության տեխնոլոգիայի,
- կարի արտադրության սարքավորումների,
- հագուստի նախագծման,
- հագուստի մոդելավորման ու գեղարվեստական ձևավորման,
- ավարտական ամփոփիչ ատեստավորման նախապատրաստման,
- մեթոդական,
- համակարգչային լսարաններ:

Լաբորատորիաներ.

- էլեկտրատեխնիկայի,
- էկոլոգիայի և կենսագործունեության ապահովման,
- նյութերի փորձարկման,
- ուսուցման տեխնիկական միջոցների:

Արհեստանոցներ.

- կարի արտադրության:

Սպորտային համալիր.

- սպորտային դահլիճ,
- լայն պրոֆիլի բաց մարզահրապարակ:

6.3.4. Ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր նորմատիվներ (ուսումնական պլան)

Նշվում են ուսումնական գործընթացի կազմակերպման ընդհանուր նորմատիվները:

Ստորև, որպես օրինակ, բերվում է միջին մասնագիտական կրթության ուսումնառության (ուսումնական պլանի) ամփոփիչ տվյալներ՝ ուսուցման տևողության 2 տարվա համար:

Պետական պահանջները կազմված են հետևյալ տվյալների հիման վրա.

- *Տեսական, գործնական և լաբորատոր ուսուցումը (շաբաթական 36 ժամ բեռնվածության դեպքում) լսարանային առավելագույն* **64 շաբաթ**
- *Միջանկյալ ատեստավորման տևողությունը* **4 շաբաթ**
- *Պրակտիկա՝ առանց տեսական ուսուցման* **14 շաբաթ**
- *Ամփոփիչ ատեստավորման տևողությունը* **2 շաբաթ**
- *Ուսումնական հաստատության պահուստային ժամեր* **1 շաբաթ**
- *Արձակուրդների տևողությունը* **11 շաբաթ**
- *Մասնագիտական հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա, առկա ուսուցմամբ* **96 շաբաթ**

ընդամենը՝

96 շաբաթ

6.4. Պրակտիկաների կազմակերպման պահանջներ

Նշվում են պահանջները տվյալ որակավորմամբ մասնագետի պատրաստման համար անհրաժեշտ պրակտիկաների կազմակերպման ու անցկացման նկատմամբ՝ ըստ պրակտիկաների տեսակների:

6.5. Միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման պահանջներ

Նշվում են միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման տեսակները և ընդհանուր պահանջները դրանց նկատմամբ:

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նշվում են ուսումնական հաստատության ակադեմիական ազատություններն ուսումնական գործընթացի բովանդակության ձևավորման գործում:

8. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Բերվում է տվյալ որակավորմամբ մասնագետի պատրաստման կրթական ծրագրի օրինակելի ուսումնական պլանը: